Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը**

ք.Հրազդան 22.12.2015թ. ժամը 11.00

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝*

-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ /բացակայում էր Գետամեջ համայնքի ղեկավարը/
-Վ.Բակլաչյան-ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Կ.Մարգարյան-ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Գ.Հայրապետյան-ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Ս.Եղիազարյան-ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Վ.Սեպոյան-ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
-Լ.Պետրոսյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
-Հ.Ալեքսանյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
-Լ.Նահապետյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
-Մ.Եղիազարյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
-Ջ.Բուրուշյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
-Ա.Օհանյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ

*Մարզի խորհրդի նիստին մասնակցում էր նաև՝*

-Հ.Օհանյան-ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության վարչական վերահսկողության բաժնի պետ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

**1.Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

**2.Մարզի համայնքներում 2015թվականի ընթացքում իրականացված վարչական հսկողության արդյունքները:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ. Ալեքսանյան/*

*ԼՍԵՑԻՆ՝*

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի զեկուցումը մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի զեկուցումը մարզի համայնքներում 2015թվականի ընթացքում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

*Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝*

-Ձեռնարկել միջոցներ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: 2016թ-ի համայնքային բյուջեն կազմելիս՝ համագործակցել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հետ:

-Իրականացնել համայնքների սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները բոլոր բնագավառներում օրենքով սահմանված կարգով: Առանձնակի ուշադրություն դարձնել 2015թ. իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված թերություններին և ձեռնարկել միջոցառումներ դրանցից խուսափելու և հետագայում դրանց կրկնումը բացառելու ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում անդրադառնալ համայնքների աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների հետագա պաշտոնավարման նպատակահարմարությանը և կիրառել կարգապահական տույժեր:

-Ելնելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի դրույթներից՝ ավելի արդյունավետ դարձնել համայնքի ավագանու կողմից համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթների իրականացումը:

-Մեկօրյա ժամկետում Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլաչյանին ներկայացնել տեղեկատվություն <<ՀայՌուսգազարդ>> ՓԲԸ-ի՝ համայնքներին ունեցած հողի հարկի և գույքահարկի պարտքերի վերաբերյալ:

*Հանձնարարվեց՝*

*ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանին՝*

-Մեթոդական աջակցություն ցուցաբերել համայնքներին 2016թ-ի համայնքային բյուջեն կազմելիս՝ ըստ ժամկետների և համապատասխան ոլորտների իրատեսական համամասնությունները պահպանելու համար:

*ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանին՝*

-Վերլուծել նախորդ տարիներին համայնքներում իրականացված վարչական հսկողությունների ընթացքում արձանագրված կրկնվող թերությունները և համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

-Կազմակերպել սեմինարներ համայնքների աշխատակազմերի քարտուղարների մասնակցությամբ՝ վերջիններիս մասնագիտական հմտություններն ու կարողությունները բարձրացնելու նպատակով:

Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Կոտայքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը 22.12.2015

| N | Համայնքի անվանումը | Գույքահարկ | | | Հողի հարկ | | | Տեղական տուրք | | | Հողերի վարձավճարներ | | | Պետական տուրք | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % |
| 1 | ք.Հրազդա | 161000.0 | 118440.7 | 73.6 | 52000.0 | 32013.6 | 61.6 | 31530.0 | 25694.2 | 81.5 | 39500.0 | 28432.7 | 72.0 | 18000.0 | 9389.1 | 52.2 |
| 2 | ք.Ծաղկա | 60000.0 | 62081.1 | 103.5 | 11500.0 | 9523.7 | 82.8 | 14970.0 | 17339.7 | 115.8 | 5391.0 | 5640.9 | 104.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3 | Արտավա | 3115.1 | 3115.9 | 100.0 | 6636.0 | 5894.3 | 88.8 | 340.0 | 345.8 | 101.7 | 570.0 | 574.8 | 100.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4 | Աղավնաձ | 4300.0 | 4049.1 | 94.2 | 2300.0 | 2243.9 | 97.6 | 280.0 | 282.0 | 100.7 | 1060.0 | 1059.5 | 100.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5 | Հանքավա | 1230.0 | 1250.2 | 101.6 | 1050.0 | 961.5 | 91.6 | 72.0 | 67.0 | 93.1 | 900.0 | 872.3 | 96.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 6 | Ջրառատ | 250.0 | 620.3 | 248.1 | 286.0 | 307.3 | 107.4 | 32.0 | 32.0 | 100.0 | 7.2 | 5.5 | 76.4 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 7 | Լեռնանիս | 6000.0 | 6215.2 | 103.6 | 5600.0 | 5737.1 | 102.4 | 310.0 | 312.5 | 100.8 | 1205.0 | 1481.2 | 122.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 8 | Մարմարի | 1636.0 | 1572.6 | 96.1 | 1750.0 | 1491.0 | 85.2 | 30.0 | 29.8 | 99.3 | 654.0 | 491.6 | 75.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 9 | Մեղրաձո | 6363.6 | 6404.7 | 100.6 | 6553.5 | 6554.0 | 100.0 | 160.0 | 175.0 | 109.4 | 30840.0 | 28440.5 | 92.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 10 | Քաղսի | 3567.1 | 4445.7 | 124.6 | 7922.0 | 7719.8 | 97.4 | 444.0 | 348.0 | 78.4 | 2000.0 | 2573.5 | 128.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 11 | Սոլակ | 4671.4 | 4250.0 | 91.0 | 9734.0 | 9235.8 | 94.9 | 500.0 | 448.8 | 89.8 | 2900.0 | 2682.6 | 92.5 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 12 | ք.Չարենց | 75600.0 | 76274.7 | 100.9 | 4500.0 | 4633.1 | 103.0 | 11060.0 | 11032.1 | 99.7 | 17500.0 | 14993.7 | 85.7 | 6500.0 | 5117.8 | 78.7 |
| 13 | Արզական | 25420.0 | 23081.0 | 90.8 | 9905.0 | 9446.5 | 95.4 | 638.5 | 974.2 | 152.6 | 1500.0 | 1402.4 | 93.5 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 14 | Կարենիս | 3752.0 | 3069.1 | 81.8 | 2239.9 | 1612.3 | 72.0 | 60.0 | 75.0 | 125.0 | 5970.3 | 2376.2 | 39.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 15 | Բջնի | 9300.0 | 7195.2 | 77.4 | 9600.0 | 8189.2 | 85.3 | 300.0 | 271.0 | 90.3 | 1500.0 | 1375.0 | 91.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 16 | Ալափարս | 8982.4 | 6432.3 | 71.6 | 13300.7 | 10355.4 | 77.9 | 728.0 | 528.0 | 72.5 | 2317.3 | 1827.0 | 78.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 17 | Ֆանտան | 2200.0 | 2677.8 | 121.7 | 7600.0 | 7016.2 | 92.3 | 132.0 | 121.0 | 91.7 | 1349.6 | 1239.7 | 91.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *Ընդամենը* | 377387.6 | 331175.5 | 87.8 | 152477.1 | 122934.7 | 80.6 | 61586.5 | 58076.1 | 94.3 | 115164.4 | 95469.0 | 82.9 | 24500.0 | 14506.9 | 59.2 |
| 18 | ք.Աբովյա | 180000.0 | 194828.3 | 108.2 | 20000.0 | 19816.3 | 99.1 | 23800.0 | 20298.6 | 85.3 | 27000.0 | 27341.1 | 101.3 | 23500.0 | 22060.0 | 93.9 |
| 19 | Ակունք | 7835.0 | 7915.7 | 101.0 | 5000.0 | 5005.2 | 100.1 | 180.0 | 246.0 | 136.7 | 650.0 | 722.3 | 111.1 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 20 | Առինջ | 52000.0 | 60710.5 | 116.8 | 6500.0 | 6505.6 | 100.1 | 1620.0 | 2422.5 | 149.5 | 1200.0 | 1027.7 | 85.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 21 | Արամուս | 8900.0 | 10223.9 | 114.9 | 6700.0 | 6085.5 | 90.8 | 810.0 | 815.0 | 100.6 | 2900.0 | 2753.0 | 94.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 22 | Արզնի | 16550.0 | 20848.9 | 126.0 | 9150.0 | 11902.6 | 130.1 | 1450.0 | 1415.3 | 97.6 | 3600.0 | 3478.5 | 96.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 23 | Բալահովի | 23899.8 | 25031.0 | 104.7 | 1442.6 | 1457.8 | 101.1 | 1505.0 | 1079.7 | 71.7 | 1403.6 | 1440.9 | 102.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 24 | ք.Բյուրեղ | 27688.8 | 23686.2 | 85.5 | 6319.7 | 4289.2 | 67.9 | 1836.0 | 2126.6 | 115.8 | 946.2 | 1240.1 | 131.1 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 25 | Գառնի | 10150.0 | 4322.6 | 42.6 | 6439.4 | 3810.9 | 59.2 | 1260.0 | 842.4 | 66.9 | 1159.8 | 663.9 | 57.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 26 | Գեղարդ | 320.0 | 359.2 | 112.3 | 1100.0 | 1051.9 | 95.6 | 10.0 | 10.0 | 100.0 | 875.0 | 845.2 | 96.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 27 | Գեղաշեն | 6175.0 | 5557.2 | 90.0 | 3400.0 | 3029.8 | 89.1 | 176.0 | 176.0 | 100.0 | 500.0 | 334.8 | 67.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 28 | Գեղադիր | 2345.0 | 3051.2 | 130.1 | 1300.0 | 1654.6 | 127.3 | 460.0 | 529.0 | 115.0 | 85.0 | 98.9 | 116.4 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 29 | Գողթ | 4050.0 | 2295.2 | 56.7 | 6180.5 | 1376.4 | 22.3 | 200.0 | 92.0 | 46.0 | 750.0 | 597.3 | 79.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 30 | Ձառ | 1700.0 | 2195.8 | 129.2 | 6000.0 | 5168.6 | 86.1 | 96.0 | 121.0 | 126.0 | 800.0 | 669.8 | 83.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 31 | Ձորաշեն | 210.0 | 208.5 | 99.3 | 1128.0 | 979.0 | 86.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 1250.0 | 1049.8 | 84.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 32 | Ձորք | 1430.0 | 1838.4 | 128.6 | 3100.0 | 3265.2 | 105.3 | 24.0 | 24.0 | 100.0 | 125.0 | 132.0 | 105.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 33 | Կամարիս | 3650.0 | 3056.2 | 83.7 | 2500.0 | 2216.0 | 88.6 | 65.0 | 60.2 | 92.6 | 1200.0 | 1060.5 | 88.4 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 34 | Կապուտս | 2803.0 | 2593.0 | 92.5 | 3600.0 | 3364.6 | 93.5 | 150.0 | 50.0 | 33.3 | 970.8 | 731.8 | 75.4 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 35 | Կաթնաղբ | 1645.0 | 1348.3 | 82.0 | 1210.0 | 1133.6 | 93.7 | 172.0 | 129.0 | 75.0 | 588.3 | 520.6 | 88.5 | 0.0 | 0.0 | 0.0 |